MY FOREST
ARMENIA

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԻՄՆԱԴՐԻ ՈՒՂԵՐՁԸ - 3
ՄԵՐ ԹԻՄԸ - 4
ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ - 5
2025 ԹՎԱԿԱՆԸ ԹՎԵՐՈՎ - 6
ՍԵՐՄԵՐ և ՏՆԿԻՆԵՐ - 7
ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ - 8
ՄԵՐ ԱՌԱՋԻՆ 2 ՄԵՏՐ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ԾԱՌԵՐԸ - 9
ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ 2025 - 10
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐ - 14
FORACCA-Ի ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ - 16
ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳՈՒՀԻ ՄԱԹԻԼԴԱՅԻ ԱՅՑԸ - 17
ՍԻՄՖՈՆԻԿ ԱՆՏԱՌ - 18
ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ. 100 ՀԱ ԱՆՏԱՌ - 19
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 20
ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ - 22
ԹՎԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ՄԱՐԴԻԿ - 23
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ - 24
ՖԻՆԱՆՍՆԵՐ - 25
ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ - 26

ՀԻՄՆԱԴՐԻ ՈՒՂԵՐՁԸ

2025 թվականը հաջող տարի էր մեզ համար. մենք տնկեցինք ավելի քան 720,000 ծառ: Տնկման շրջանը լի էր մարտահրավերներով, քանի որ մեր թիմերը միաժամանակ համակարգում էին աշխատանքներ չորս տարբեր վայրերում գտնվող անտառապատման տարածքներում: Այս դժվարությունները հաղթահարվեցին բարձր մասնագիտական մակարդակով և վստահությամբ:

Մեր աճը հնարավոր է դարձել ձեր՝ շատերիդ աջակցության շնորհիվ: 2025 թվականին մեզ միացավ 137 նոր նվիրատու, ինչը 50%-ով ավելի է՝ համեմատած 2024 թվականի հետ: Սա նշանակում է, որ ավելի ու ավելի շատ մարդիկ են հասկանում մեր ուղերձը և ցանկանում գործել:

Ձեզ բոլորիդ շնորհիվ մենք անցել ենք 3 միլիոն տնկված ծառի շեմը: Այս թիվը ներկայացնում է 960 հեկտար նորատունկ անտառ:

Մեծ ուրախությամբ արձանագրեցի, որ մեր ամենաառաջին տարածքներից երկուսում՝ Շիրակամուտում և Ջրաշեն I-ում, բազմաթիվ ծառեր արդեն հասել են 2 մետր բարձրության: Անհամբեր սպասում եմ 2026 թվականի ամռանը, որը խոստանում է ավելի տպավորիչ արդյունքներ:

2025 թվականին մեզ համար առանձնահատուկ պատիվ էր մեր նորաստեղծ անտառի հիմնարկեքի առթիվ հյուրընկալել Նորին Մեծություն Բելգիայի Թագուհի Մաթիլդային:

2026 թվականը ևս խոստանում է լինել հաջող, քանի որ մեկնարկը կտրվի Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ֆինանսավորվող մի կարևոր հնգամյա ծրագրի: 2026 թվականը հատկապես նշանակալի տարի է լինելու թե՛ Հայաստանի, և թե՛ մեզ համար, քանի որ երկիրը հոկտեմբերին կհյուրընկալի «Կենսաբազմազանության մասին» կոնվենցիայի Կողմերի 17-րդ համաժողովը (COP 17):

Թեև բոլոր այս հուսադրող ազդակները ոգևորիչ են, այնուամենայնիվ մենք դեռևս կանգնած ենք վայրի բնության նկատմամբ մարդկային անտարբերության ծանր հետևանքների առջև: Մտածելակերպի և վերաբերմունքի փոփոխությունը դեռ երկար ճանապարհ է պահանջում:

Մի կողմից, մենք պետք է հասկանանք, որ յուրաքանչյուրս ենք պատասխանատու մոլորակին հասցրած վնասի համար, և մեր պարտքն է ուղղել այն: Մյուս կողմից, անտառների ստեղծումն ունի շատ ավելի լայն նշանակություն: Անտառները պարզապես անհրաժեշտություն են մոլորակի վրա մարդու կյանքի պահպանման համար: Թույլ տվեք, որ այս միտքը հաղթի ձեզ. տնկեք ծառեր, տնկեք շատ ծառեր, նույնիսկ ստեղծեք ձեր սեփական անվանական անտառը: Կամ պարզապես փոխհատուցեք ձեր օրական ազդեցությունը և դարձեք ամսական նվիրատու: Այժմ հենց ճիշտ ժամանակն է: Վստահեցնում եմ, որ 10 տարի անց, նայելով այն գեղեցիկ անտառներին, որոնց ստեղծմանը մասնակցել եք, ձեր զգացած գոհունակությունն ու երջանկությունը անհամեմատելի կլինեն այսօրվա ձեր փոքր զոհաբերության հետ:

2026 թվականին թող ավելի շատ մարդ ընտրի այս ճանապարհը և սկսի ապրել ոչ միայն մոլորակի տված շռայլ բարիքների հաշվին շահույթ ստանալով և անտեսելով իր հասցրած վնասը, այլև բնության հետ ներդաշնակ կյանք վարելով, նպաստելով դրա ամրապնդմանը՝ հանուն ընդհանուր բարիքի, հանուն ներկայի ու ապագայի:

Անտրէ Գումուշճեան
Հիմնադիր և գլխավոր տնօրեն

ՄԵՐ ԹԻՄԸ

Անտրէ Գումուշճեան
Հիմնադիր և գլխավոր տնօրեն

Լիլիթ Մարտիրոսյան
Փոխտնօրեն

Վահե Մարտիրոսյան
Գործառնական տնօրեն

Տարոն Ալեքսանյան
Գիտական մասի ղեկավար և ԱՏՀ փորձագետ

Լևոն Մխիթարյան
Տնկարանի ղեկավար

Ալինա Կարապետյան
Կորպորատիվ կապերի ղեկավար

Հեղինե Արմենյան
Բարերարների հետ կապերի ղեկավար

Տաթևիկ Ղումաշյան
Սոցիալական մեդիայի ղեկավար

Փաթիլ Թութունջյան
Կայքի և թվային դրամահավաքի ղեկավար

Արփինե Ալեքսանյան
Միջոցառումների համակարգող

Դիանա Կիրակոսյան
Գլխավոր հաշվապահ

Իրա Մանգասարյան
Ադմինիստրատիվ օգնական

Էդվարդ Էդարյան
Դաշտային աշխատանքների համակարգող

Տարոն Ղազարյան
Դաշտային աշխատանքների համակարգող

Գեղամ Հակոբյան
Տնկարանի համակարգող

Սարգիս Պետրոսյան
Շինարարության պատասխանատու

ՄԵՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2025 թվականին մեր աշխարհագրությունն ընդլայնվեց երկու նոր մարզով՝ Շիրակ և Գեղարքունիք: Այժմ մենք ակտիվ գործունեություն ենք ծավալում Հայաստանի չորս մարզերում: «Պենժամին Գումուշճեան» տնկարանը շարունակում է մնալ մեր գործունեության սիրտը՝ ապահովելով տնկիների ավելի քան 90%-ը տնկման շրջանի ընթացքում:

Մենք հպարտ ենք նոր համայնքների հետ համագործակցությամբ: Նրանք են՝ Սևան համայնք (Ծաղկունք անտառապատման տարածք) և Աշոցք համայնք (Զորաշեն անտառապատման տարածք):

2025-Ը ԹՎԵՐՈՎ

235
հեկտար
վերականգնված
տարածք

2,390
տնկված ծառ

567
կամավոր

150
տնկող

312,845
ծառերի
խնամք

ՍԵՐՄԵՐ ԵՎ ՏՆԿԻՆԵՐ

2025 թվականին մենք աճեցրել ենք ավելի քան մեկ միլիոն տնկի, որոնցից 50,000-ը՝ փակ արմատային համակարգով: Յուրաքանչյուր տարի մենք ձգտում ենք բարձրացնել և՛ տնկիների որակը, և՛ արտադրողականությունը, և այս առաջընթացը հիմնված է մեր տնկարանի աշխատակիցների հետ ամեն ամիս կազմակերպվող ուսուցողական դասընթացների ու առօրյա աշխատանքի վրա:

Հենց սկզբից մենք խնամքով ընտրում ենք լավագույն սերմերը, որոնք այնուհետև մաքրվում և ցանվում են տնկարանում ու ջերմատներում: Մեր ուշադրությունը կենտրոնացած է տեղական տեսակների բազմացման վրա, ինչպիսիք են կաղնին, վայրի տանձենին, խնձորենին, թխկին և բոխին՝ ապահովելով գենետիկական բազմազանություն և բնապահպանական կայունություն տնկիների յուրաքանչյուր խմբաքանակում: Տնկարանի անձնակազմն իրականացնում է արտադրության բոլոր փուլերը՝ սերմերի պատրաստում և փորձարկում, սերմնա–ցան՝ խիստ վերահսկվող պայմաններում, երիտասարդ տնկիների տեղափոխում տարաների մեջ և բույսերի առողջության մշտա–դիտարկում աճի բոլոր փուլերում:

Խնամքը գործընթացի ամենակարևոր և ժամանակատար մասն է: Այն սկսվում է գարնանը և շարունակվում մինչև առաջին ձյան տեղալը: Տնկարանային աշխատանքների մեկ այլ առանցքային փուլ է տնկիների նախապատրաստումը ծառատունկին: Թաղարներում աճեցված տնկիները կարելի է անմիջապես տեղափոխել տնկադաշտ, ինչը գործընթացը դարձնում է համեմատաբար պարզ: Բաց արմատային համակարգով տնկիները, սակայն, պահանջում են զգալիորեն ավելի շատ ժամանակ և ջանք: Հողից հանելուց հետո աշխատակիցները դրանք տեսակավորում են ըստ որակի, այնուհետև կենսունակները փաթաթում և տեղափոխում տնկման տարածքներ: Բավարար չափով չզարգացած տնկիները վերատնկվում են լրացուցիչ թաղարներում կամ հատուկ տնկարանային «դպրոցում», որտեղ աճում են ևս մեկ տարի՝ դառնալով ավելի ամուր և դիմացկուն՝ նախքան հետագա տնկման սեզոններում օգտագործվելը:

Այս տարի եղանակային բարենպաստ պայմանները թույլ տվեցին մեզ ժամանակին ավարտել տնկարանային բոլոր աշխատանքները: Ընդհանուր աճեցված տնկիներից 722,482-ը տնկվել են:

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Անտառում յուրաքանչյուր տեսակ՝ կրելով գենետի–կական յուրահատուկ հատկանիշներ, անփոխարինելի անհատականություն է: Յուրաքանչյուր տեսակ ներկայացնում է եզակի արժեք, և այսպիսով չկան «արժեքավոր» և «անարժեք» տեսակներ: Անտառի յուրաքանչյուր տեսակ հազարավոր թելերով ուղղակիո–րեն կամ անուղղակիորեն կապված է ոչ միայն հարևան, այլև հեռու գտնվող տեսակների հետ: Այս փոխկապակցվածությունն ապահովում է անտառային էկոհամակարգի արդյունավետ գործունեությունն ու կայունությունը:

Սա է պատճառը, որ մենք ձգտում ենք ներառել հնարա-վորինս շատ ծառատեսակներ և թփատեսակներ, և մեր ընտրությունը սահմանափակող հիմնական գործոնները տարածքի՝ ծովի մակերևույթից բարձրությունն ու հողի որակն են:

Տանձենի կովկասյան
233,171

Սոճի սովորական
187,471

Խնձորենի արևելյան
114,132

Կաղնի խոշորառէջ
104,100

Թխկի բարձրլեռնային
35,700

Կեչի լիտվինովի
28,908

Թխկի կեղծսոսիատերև
11,500

Չիչխան
3,500

Այլ թփեր
3,400

Հացենի
600

ՄԵՐ ԱՌԱՋԻՆ 2 ՄԵՏՐ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՄԲ ԾԱՌԵՐԸ

Մեծ բավարարվածությամբ ենք հայտնում, որ մեր տնկած առաջին ծառերը հասել են երկու մետր բարձրության:

Այս առաջին «չեմպիոնները» վայրի տանձենիներ են, որոնք տնկվել են 2021 թվականի գարնանը՝ Շիրակամուտի անտառվերականգնման տարածքում: Դրանք բոլորը գտնվում են մոտ 5 հեկտար տարածք զբաղեցնող հողակտորում: Այս արդյունքն իսկապես բացառիկ է: Մենք նույնիսկ չէինք ակնկալում այսպիսի արագ աճ այսքան կարճ ժամանակահատվածում:

Կարևոր է հիշել այն անհավանական երկար ժամանա-կահատվածի մասին, որն անհրաժեշտ է անտառների զարգացման համար, ինչը մենք՝ մարդիկս, դժվարությամբ ենք ընկալում: Ընդհանուր առմամբ, ծառերը երկու մետր բարձրության հասնում են 6-ից 8 տարում, իսկ կաղնիների դեպքում՝ մոտ 10-ից 15 տարում:

ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ 2025

ԼԵՌՆԱՋՈՒՐ IV

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ՝ 1900-2300 Մ
2025 Թ. ՏՆԿՎԵԼ Է 142.5 ՀԱ

Լեռնաջուր IV-ը Լեռնաջուր վտակի գեղատեսիլ հովտում գտնվող մեր անտառապատման տարածքներից ամենահեռու տեղակայվածն է: Այն զբաղեցնում է ընդհանուր 230 հա մակերես: Հողը հարուստ է օրգանական նյութերով և խոնավությամբ, ինչը նպաստում է ծառերի արագ աճին:

Մենք այս տարածքում աշխատել ենք թե՛ գարնանը, թե՛ աշնանը և տնկել ենք ընդհանուր թվով 427,654 ծառ՝ հատկապես սոճի և վայրի տանձենի, ինչպես նաև կաղնի, վայրի խնձորենի, կեչի, թխկի և թփեր:

Քանի որ գարնանը ձյունը շատ ուշ հալվեց, մենք ծառատունկը սկսեցինք միայն ապրիլի 22-ին, և սա մեր կազմակերպության պատմության մեջ ամենաուշ գարնանային ծառատունկն էր: Ավելին՝ գրեթե օրընդմեջ անձրև էր տեղում: Այդ պատճառով ստիպված էինք ծառատունկն իրականացնել ավելի երկար ժամանակահատվածում և ավարտեցինք այն միայն մայիսի 18-ին:

Աշնանային տնկումներն ավելի կանոնավոր ընթացան. հոկտեմբերի 22-ից սկսած՝ գրեթե մեկ ամիս շարունակ, մեր թիմերն անընդհատ հաղթահարում էին Լեռնաջուր IV-ի դժվարանցանելի լանջերը՝ մի տարածք, որը շուտով կծածկվի գեղեցիկ և ճոխ անտառով:

ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ 2025

ԾԱՂԿՈՒՆՔ

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ՝ 1900-2300 Մ
2025 Թ. ՏՆԿՎԵԼ Է 29 ՀԱ

Ծաղկունքի անտառապատման տարածքը Գեղարքունիքի մարզի մեր միակ տարածքն է: 2025 թվականին այստեղ տնկել ենք 77,669 ծառ՝ խնամքով ընտրելով տեղական կլիմային և լանդշաֆտին հարմար տեսակներ: Տեսակային կազմը ներառում է վայրի տանձենի և վայրի խնձորենի, ինչպես նաև կաղնի, թխկու մի քանի տեսակներ և սոճի:

Ներառել ենք նաև տեղական բնապատկերին այնքան բնորոշ չիչխանը՝ մանր, բայց համեղ և առողջարար, նարնջագույն պտուղներով, որն օգտագործվում է հյութ և թեյ պատրաստելու համար և գնահատված է իր դիմացկունության, էկոլոգիական օգուտների և հողը կայունացնող արմատային համակարգի համար:

Ծաղկունքի հողը հատկապես դժվարամշակ է: Տարիների գերարածեցումից հողը պնդացել է, և հիմա այն դժվար է փորել: Այնուամենայնիվ, ո՛չ մեր նվիրված թիմերը, ո՛չ էլ կամավորների խմբերը թույլ չտվեցին, որ այս պայմանները հուսահատեցնեն իրենց: Համառության և թիմային աշխատանքի շնորհիվ նրանք ապահովեցին, որ յուրաքանչյուր տնկի պատշաճ կերպով տնկվի և ստանա հնարավոր լավագույն մեկնարկը:

Մենք խորապես երախտապարտ ենք նրանց ուժի և նվիրվածության համար, քանի որ նման հողերի վերականգնումը պահանջում է ոչ միայն աշխատանք, այլև անսասան վճռականություն:

ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ 2025

ԼԵՌՆԱՋՈՒՐ V

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ՝ 1900-2350 Մ
2024 և 2025 ԹԹ. ՏՆԿՎԵԼ Է 119.5 ՀԱ

Լեռնաջուր V տարածքում տնկման աշխատանքները մեկնարկել են 2024 թվականին և շարունակվել ողջ 2025 թվականի ընթացքում: Այս տարածքն անտառի երկարաժամկետ աճի տեսանկյունից ամենամեծ ներուժն ունեցող տարածքներից է:

Հողի որակն այստեղ շատ բարձր է, կլիման՝ նպաստավոր, իսկ նորաստեղծ տնկարկները հարակից են բնական անտառների, ինչն ապահովում է բնական պաշտպանություն և էկոլոգիական շարունակականություն:

Հիմնական տնկված ծառատեսակներն են կեչին, կաղնին և վայրի տանձենին: Տնկել ենք նաև վայրի խնձորենի, լորենի, թխկու մի քանի տեսակներ, թեղի, հաճարենի և տարատեսակ թփեր:

Ծառատեսակների այս մտածված ընտրությունը նպաստում է հզոր և հարուստ էկոհամակարգի ձևավորմանը, որը խթանում է կենսաբազմազանությունը, բարելավում հողի առողջությունը և բարձրացնում անտառի դիմադրողականությունը կլիմայական սթրեսների նկատմամբ: Ժամանակի ընթացքում Լեռնաջուր V-ը կվերածվի լավ կառուցվածքով ինքնաբավ անտառի, որը ներդաշնակորեն կմիաձուլվի շրջակա անտառածածկ տարածքներին:

ԱՆՏԱՌՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ 2025

ՁՈՐԱՇԵՆ

ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ՝ 2000-2200 Մ
2025 Թ. ՏՆԿՎԵԼ Է 28 ՀԱ

Ձորաշենի գեղատեսիլ բարձրադիր գոտին առանձնանում է հարուստ հրաբխային հողերով, խոնավության պահպանման համար նպաստավոր բնական պայմաններով, որոնք լավագույնս համապատասխանում են դիմակայուն երիտասարդ անտառի հիմնադրման համար անհրաժեշտ պայմաններին:

Արդեն իսկ գոյություն ունեցող անտառային ցրված «կղզյակները» լրացնում են լանդշաֆտը: Մեր նոր տնկարկները նախագծված են անտառային այդ բեկորները միավորելու համար և աստիճանաբար ձևավորելու են մեկ միասնական, կենդանի օրգանիզմ: Վերականգնելով էկոլոգիական միջանցքները՝ մենք հզորացնում ենք կենսաբազմազանությունը, բարելավում էկոհամակարգերի շարունակականությունը և մեծացնում տարածքի երկարաժամկետ կայունությունը:

Այս նպաստավոր պայմանները մեզ թույլ են տալիս տնկել տեղական ծառատեսակների բազմազան տեսականի և հիմք դնել ծաղկուն էկոհամակարգի, որը տարեցտարի ավելի կհզորանա: 2025 թվականի աշնանն այս տեղամասում տնկվել է 83,438 ծառ: Հիմնական տեսակներն են վայրի խնձորենին, կաղնին և թխկին: Կեչին, սոճին և տարատեսակ թփերը նույնպես այս համադրության մասն են կազմում՝ նպաստելով կառուցվածքային բազմազանությանը և էկոլոգիական հավասարակշռությանը: Առաջիկա տարիներին տնկման աշխատանքները կշարունակվեն՝ աստիճանաբար ընդլայնելով անտառը և ամրապնդելով Ձորաշենի վերափոխումը դեպի կայուն և փոխկապակցված լանդշաֆտի:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ

Տարին բնութագրվեց կանոնավոր տեղումներով, ուստի հարավային դիրքադրության 2հա փորձնական տարածքում, որտեղ տեղադրել ենք կաթիլային ոռոգման համակարգ, սոճու տնկիների լրացուցիչ ոռոգում չի իրականացվել: Այնուամենայնիվ, օգոստոսյան չոր եղանակը բացասաբար անդրադարձավ այս տարածքի սոճու տնկիների վրա: Մենք կշարունակենք ոռոգումը 2026 թվականին՝ աճի կրիտիկական շրջաններում երաշտի հնարավոր բացասական ազդեցությունը մեղմելու համար:

ՋՐԱՇԵՆ I

2021 թվականի մեծածավալ տնկման աշխատանքներից հետո պահպանված տնկիները շարունակում են լավ աճել և կայուն զարգացում դրսևորել: Առանձնահատուկ լավ արդյունքներ են ցույց տալիս 2024 թվականի գարնանը վերատնկված սոճու տնկիները: Դիտարկման արդյունքները փաստում են շուրջ 80% կպչողականություն և աճի կայուն դինամիկա: Այս տնկիների հաջող արմատավորումը հստակ վկայում է այն մասին, որ կիրառված տնկման մեթոդաբանությունը նպաստել է ավելի լավ արդյունքների՝ նախկինում կիրառված փորձի համեմատ: 2026 թվականին մենք կընդլայնենք վերատնկման աշխատանքները տարածքի այլ հատվածներում ևս:

ՋՐԱՇԵՆ II

Ի տարբերություն Ջրաշեն I-ի՝ այս անտառվերականգնման տեղամասն աչքի է ընկնում ավելի խոնավ կլիմայական պայմաններով: Այնուամենայնիվ, բարձր լեռնային պայմանները, այդ թվում՝ օդի ցածր միջին ջերմաստիճանը, ուժեղ քամիները, կարճատև վեգետացիոն շրջանը և վաղաժամ ցրտահարությունները զգալիորեն դանդաղեցնում են տնկիների բնականոն զարգացումը:

Մինչ լայնատերև ծառատեսակները, ինչպիսիք են տանձենին, թխկին, կաղնին և կեչին, ցուցաբերում են աճի և հարմարվողականության բավականին լավ արդյունքներ (հատկապես ձորակներում), սոճիների վիճակն ավելի բարդ է: 2026 թվականի գարնանը մենք կիրականացնենք մասնակի վերատնկման աշխատանքներ առավել տուժած հատվածներում:

«ԴԻԼԻՋԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ

Այստեղ անտառվերականգնման աշխատանքներն այս փուլում հիմնականում ներառում են տարածքի պահպանությունը և 2021-2022 թվականներին տնկված ծառերի աճի մոնիթորինգը: 2025 թվականի մեր դիտարկումները ցույց տվեցին, որ ծառերի կանոնավոր խնամքը էապես կնպաստի ավելի լավ արդյունքների հասնելուն: 2026 թվականին նախատեսում ենք իրականացնել խորքային ուսումնասիրություն՝ այս տարածքում վերատնկման աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար:

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐ

ԼԵՌՆԱՋՈՒՐ I ԵՎ II

Տնկված ծառերի ընդհանուր կպչողականությունը կազմում է մոտ 70%: Այնուամենայնիվ, աճի տեմպերը մնում են համեմատաբար ցածր՝ բարձրլեռնային բնակլիմայական պայմանների պատճառով: Միջին ցածր ջերմաստիճանը, կարճատև վեգետացիոն շրջանը և ուժեղ, մշտական քամիներն այն գործոններն են, որոնք սահմանափակում են ծառերի օպտիմալ զարգացումը: 2025 թվականի աշնանը տարածքի մի մասը տուժեց հրդեհից: Վնասի ամբողջական չափը կգնահատվի 2026 թվականի գարնան վերջին, երբ դաշտային հետազոտությունները հնարավորություն կտան հավաքագրել ճշգրիտ տվյալներ:

ԼԵՌՆԱՋՈՒՐ III

2024 թվականի գարնանն այս տարածքում տնկվել է 11,750 տնկի՝ հիմնականում կովկասյան տանձենի և սովորական սոճի: Մեր դիտարկումները ցույց են տվել, որ կպչողականությունը կազմում է ավելի քան 65%:

ԼԵՌՆԱՋՈՒՐ V

Այս տարածքում իրականացված մոնիթորինգը փաստում է 75% կպչողականություն, ինչն անշուշտ գոհացնող արդյունք է: Ինչպես և սպասվում էր, աճի տեմպը համեմատաբար ցածր է՝ պայմանավորված բարձրլեռնային գործոններով, այդ թվում՝ կարճատև վեգետացիոն շրջանով, ուժեղ և մշտական քամիներով, միջինում ցածր ջերմաստիճանով և ընդհանուր խիստ կլիմայական պայմաններով: Տեղամասում նկատվել է բարձր և խիտ խոտածածկի աճ: Հետևաբար, անհրաժեշտ է իրականացնել ամենամյա խնամքի միջոցառումներ՝ խոնավության և սննդանյութերի համար մրցակցությունը նվազեցնելու և տնկիների զարգացմանն առավելագույնս նպաստելու նպատակով:

ՈՒՐԱՍԱՐ

2025 թվականի ամառային մոնիթորինգը ցույց է տվել կայուն՝ 75%-ից 80% կպչողականություն անտառապատման այս տարածքում, ընդ որում՝ լայնատերև ծառատեսակները դրսևորել են աճի լավ տեմպեր: Հողի որակը գերազանց է, առկա է բավարար խոնավություն, և մեր տնկիները հաջողությամբ զարգանում էին:

Սակայն 2025 թվականի աշունը նոր և լուրջ մարտահրավերներ առաջադրեց մեր անտառվերականգնման նախագծի համար: Ուշ աշնանը, երկարատև չորային շրջանից հետո, լայնածավալ և ինտենսիվ հրդեհը վնաս պատճառեց վերականգնվող տարածքին: Այնուամենայնիվ, քանի որ հրդեհը հիմնականում տարածվել էր չոր խոտածածկով, այն արագ էր անցել, և մենք կարծում ենք, որ տնկիները միայն թեթևակի են վնասվել: Վնասների համապարփակ և մանրամասն գնահատումը նախատեսված է 2026 թվականի ուշ գարնանը, երբ սեզոնային պայմանները թույլ կտան իրականացնել այն:

FORACCA. ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2025 թվականին հաջողությամբ իրականացվել են «Անտառ–վերականգնում և կլիմայի փոփոխություն Հայաստանում» (FORACCA) ծրագրի առաջին տարվա գործողությունները, որը համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) կողմից: Այս նախաձեռնությունն աջակցում է համայնքային հողերում անտառվերականգնմանը և խթանում է կլիմայակայուն զարգացումը ողջ Հայաստանում:

Լեռնաջուր IV-ի տնկման աշխատանքները

Լեռնաջուր IV անտառապատման տարածքում հիմնվել է 60 հեկտար անտառ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) ֆինանսավորմամբ՝ FORACCA ծրագրի միջոցով: Դրամաշնորհը ներառել է նաև Լեռնաջուր I և II տեղամասերի 70 հեկտար տարածքի խնամքի միջոցառումները՝ ապահովելով երիտասարդ ծառերի համար կենսական խնամքը բարդ պայմաններում առողջ աճի համար: Կայուն էկոհամակարգեր ստեղծելու նպատակով, որոնք կարտացոլեն բնական անտառների կառուցվածքը, օգտագործվել են բացառապես տեղական ծառատեսակներ՝ կաղնի, սոճի, թխկի, կեչի և թփեր:

«Անտառային դաշինքի» հզորացումը

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) հետ համագործակցությունը հնարավորություն տվեց «Հայաստանի անտառային դաշինքին» ներգրավել կես դրույքով աշխատող քարտուղար և սկսել նոր կայքի մշակման աշխատանքները՝ բարելավելով անտառվերականգնման կարիքների համակարգումն ու իրազեկումը: Այս քայլերն ամրապնդում են անտառային ոլորտի շահերի պաշտպանությունը, ներգրավում լրացուցիչ աջակցություն և համադրում ջանքերը երկրի կլիմայական ազգային նպատակների հետ:

Հայաստանում անտառների վերականգնում և կլիմայի փոփոխություն» (FORACCA) ծրագիրը համաֆինանսավորվում է Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (SDC) և Հայաստանի անտառային դաշինքի անդամ չորս իրականացնող կազմակերպությունների՝ «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության, «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության, «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից: Ծրագրի իրականացման գործընկերներն են նաև Անտառների, ձյան և լանդշաֆտային հետազոտությունների շվեյցարական դաշնային ինստիտուտը (WSL) և ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (FAO):

ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳՈՒՀԻ ՄԱԹԻԼԴԱՅԻ ԱՅՑԸ

Նորին Մեծություն թագուհի Մաթիլդան մասնակցեց Հայ-բելգիական անտառի հիմնարկեքին

Հոկտեմբերի 15-ին Իմ անտառ Հայաստանը մեծ պատիվ ունեցավ հյուրընկալելու Նորին Մեծություն Բելգիայի թագուհի Մաթիլդային Գեղարքունիքի մարզի Ծաղկունք համայնքում «Հայ-բելգիական անտառի» պաշտոնական հիմնարկեքի արարողությանը: Թագուհին Հայաստան էր ժամանել որպես Միավորված ազգերի կազմակերպության Կայուն զարգացման նպատակների պաշտպան (SDG Advocate)՝ վերահաստատելով շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման համաշխարհային կարևորությունը:

Վաղ առավոտից Իմ անտառ Հայաստանի թիմը և ծառատունկ իրականացնող չորս բրիգադները գտնվում էին անտառապատման տարածքում: Պարզ երկնքի և կատարյալ եղանակային պայմանների ներքո բացման արարողությունը սկսվեց անտառի տեղեկատվական ցուցանակի բացմամբ:

Այնուհետև Թագուհին տնկեց խորհրդանշական ծառ՝ ազդարարելով մի անտառի հիմնադրումը, որը ծառայում է որպես Բելգիայի և Հայաստանի միջև բարեկամության կենդանի խորհրդանիշ:

«Հայ-բելգիական անտառը» զբաղեցնում է 20 հեկտար տարածք և բաղկացած է 60,000 ծառից: Ծրագիրը հնարավոր է դարձել բելգիացի և հայ անհատների ու կազմակերպությունների առատաձեռն աջակցության շնորհիվ: Այն տնկվել է 2025 թվականին տեղացի աշխատողների կողմից՝ նպաստելով թե՛ շրջակա միջավայրի վերականգնմանը, թե՛ տեղացիների զբաղվածությանը:

Արարողությունից հետո թագուհի Մաթիլդան քայլեց նորատունկ անտառի տարածքով, ուսումնասիրեց երիտասարդ ծառերը և զրուցեց մեր թիմի անդամների ու ծառատունկ իրականացնողների հետ: Թագուհու անկեղծ հետաքրքրությունը, ուշադրությունը մանրուքների նկատմամբ և անտառվերականգնման մարտահրավերների խորը ըմբռնումն այս այցը դարձրին ոգեշնչող և նշանակալի բոլոր ներկաների համար:

ՍԻՄՖՈՆԻԿ ԱՆՏԱՌ

Այս տարի լրացավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հիմնադրման 20-ամյակը, և մենք միասին նախաձեռնեցինք **«Սիմֆոնիկ անտառ» նախագիծը**, որը խորհրդանշում է մշակույթի և բնության ներդաշնակությունը: Այս հոբելյանը նշանավորելու համար Շիրակի մարզի Ձորաշեն համայնքում կտնկվի 20,000 ծառ՝ զբաղեցնելով շուրջ 6 հեկտար տարածք: Այս անտառը կաճի որպես երաժշտության և կյանքի հավերժության խորհրդանիշ՝ արտացոլելով նվագախմբի հավատը շարունակականության, ստեղծարարության և արվեստի անմահ ուժի հանդեպ:

Անտառի ստեղծմանն աջակցելու նպատակով հոկտեմբերի 23-ին Արամ Խաչատրյան համերգասրահում նվագախմբի կող–մից կազմակերպվեց գեղեցիկ համերգ: Սերգեյ Սմբատյանի դիրիժորությամբ կայացած համերգին հնչեցին Պյոտր Չայկովսկու և Էդվարդ Գրիգի՝ բնության գեղեցկությամբ ներշնչված ստեղծագործությունները, ինչպես նաև Էդվարդ Էլգարի թավջութակի կոնցերտը՝ Ռաֆայելա Գրոմեսի և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ (գլխավոր հովանավորներ՝ ԱյԴի բանկ և Իդրամ): Համերգի հասույթով հավաքագրվեց 9,291 ծառի համար անհրաժեշտ գումարը, որոնք արդեն տնկվել են Ձորաշենում հատկացված տեղամասում: 2026 թվականին նախատեսվում է ևս մեկ ուշագրավ միջոցառում՝ մնացած ծառերի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցները հայթայթելու նպատակով: Հետևե՛ք նորություններին:

Մշակույթը և բնությունը՝ կողք կողքի

Մեկ այլ հատուկ դրամահավաք դեռևս ընթացքի մեջ է. մենք արդեն տնկել ենք 37,000 ծառ Շառլ Ազնավուրի անվան անտառում, սակայն մեր նպատակը շատ ավելի մեծ է: Մեր կայքում կարող եք կատարել նվիրատվություն և սատարել այս բացառիկ և խորհրդանշական անտառի ստեղծմանը:

Ձորաշենում միմյանց կողք կողքի գտնվող Սիմֆոնիկ անտառը և Ազնավուրի անտառը ցույց են տալիս մի պարզ ճշմարտություն. երբ մարդիկ միավորվում են իմաստալից գործի շուրջ, ազդեցությունը շատ ավելի մեծ է, քան տնկված ծառերի քանակը: Այս նախագծերը տոնում են մշակույթը, մեծարում են մեծ գեղարվեստական գործերը և ներգրավում աշխարհի տարբեր ծայրերից մարդկանց՝ ավելի առողջ ապագա կերտելու գործում:



ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԲՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. 100 ՀԵԿՏԱՐ ԱՆՏԱՌ 3 ՏԱՐՈՒՄ

2025 թվականի նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում ստորագրվեց եռակողմ հուշագիր Կենտրոնական բանկի, Հայաստանի բանկերի միության և «Իմ անտառ Հայաստան» հկ-ի միջև՝ ազդարարելով կորպորատիվ սոցիալական պատասխանատվության խոշոր նախաձեռնության մեկնարկը: Այս գործընկերության միջոցով Հայաստանի ֆինանսական հատվածը հանձն է առնում երեք տարվա ընթացքում հիմնել 100 հեկտար նոր անտառ Լոռու մարզի Փամբակ համայնքի Լեռնաջուր բնակավայրի համայնքային հողերում: Ծրագրի շրջանակներում կտնկվի տեղական ծառատեսակների 300,000 ծառ՝ ձևավորելով կայուն, կենսաբազմազանությամբ հարուստ անտառներ, որոնք հետագայում կդառնան համայնքային սեփականություն:
Այս նախագիծը հաջորդում է 2023 թվականի նախաձեռնությանը, որի ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկը և Հայաստանի բոլոր բանկերը համատեղ տնկել էին 50 հեկտար անտառ Ուրասարի և Ջրաշենի հարևանությամբ՝ ցույց տալով շրջակա միջավայրի պահպանության հանդեպ իրենց շարունակական հանձնառությունը: Ստորագրման արարողության ժամանակ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանն ընդգծեց.

«Այս նախաձեռնությունն ավելին է, քան պարզապես ծառատունկ. սա արձագանք է բնապահպանական այնպիսի հրատապ մարտահրավերների, ինչպիսիք են օդի աղտոտ–վածությունը, անտառային հրդեհները, հողերի էրոզիան և անապատացումը»:

Երեք տարի տևողությամբ այս համատեղ ջանքը ներկայացնում է տևական համագործակցություն Հայաստանի ֆինանսական հաստատությունների և մեր կազմակերպության միջև: Սա ներդրում է երկրի կլիմայակայուն ապագայի մեջ:

ԱՆՏԱՌՆԵՐ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՄԱՐԴԿԱՆՑ

2025 թվականի աշնանը մենք Լեռնաջուր IV անտառապատման տարածքում տնկեցինք երկու հիշատակի անտառ: Անտառը ոչ միայն կենդանի հարգանքի տուրք է, այլև շարունակականության, աճի և հիշատակի խորհրդանիշ: Այն իր հուշարձանային դերից բացի նպաստում է կենսաբազմազանությանը, մաքուր օդին և կայուն միջավայրին՝ ապագա սերունդների համար:

Հիշատակի անտառն ավելին է, քան պարզապես հիշողության հարգում. այն կյանքի շրջապտույտի խորհրդանիշն է: Բացի անհատի կյանքը և հիշատակը պատվելուց, յուրաքանչյուր անտառ նպաստում է կենսաբազմազանությանը, օդի մաքրությանը և գալիք սերունդների համար ավելի կայուն շրջակա միջավայրի ստեղծմանը:

Լիա Ծյելդերուպի հիշատակի անտառ

Լիա Ծյելդերուպի հիշատակի անտառը, որը բաղկացած է 20,000 ծառից, հնարավոր դարձավ Լիայի ընկերների, ընտանիքի և «Դեպի Հայք» կազմակերպության (որտեղ Լիան մասնակցել էր կամավորական ծրագրի) առատաձեռն նվիրատվությունների շնորհիվ: Լիան վառ անհատականությամբ և կարեկցանքով լի երիտասարդ աղջիկ էր, ով խորապես սիրում էր Հայաստանը, որն իր համար հայտնագործել էր միայն վերջերս: Ցավոք, նա կյանքից հեռացավ 2025 թվականի գարնանը ԱՄՆ-ում տեղի ունեցած ավտովթարի հետևանքով: Ի հիշատակ նրա՝ Լիայի մտերիմները միավորվեցին՝ ստեղծելու մի անտառ, որը կարտացոլի նրա ոգին, բարությունը և կապը Հայաստանի հետ:

Առցանց դրամահավաքի միջոցով հավաքվեց մոտ 16,000 ծառ, իսկ «Դեպի Հայք»-ը լրացրեց 20,000-ի հասնելու համար: Նոյեմբերին «Դեպի Հայք» կազմակերպության 40 կամավորներ այցելեցին Լեռնաջուր՝ իրենց ընկերոջ հիշատակի անտառը տնկելու հուզիչ նախաձեռնությամբ:

Լիան Գարուն Վարդապետյանի ու Գեւորգ Խաչատուրյանի թոռնուհին էր՝ երկուսն էլ 1915 թվականի Հայոց ցեղասպանության վերապրածներ, ծնունդով Վանից: Այսօր Լիայի հիշատակի անտառը ծառայում է որպես կամուրջ անցյալի, ներկայի և ապագայի միջև. մի վայր, որտեղ հիշողությունն արմատներ է ձգում, իսկ կյանքը շարունակում է աճել:

Եղիս Գիրոքեանի հիշատակի անտառ

Եղիս Գիրոքեանի հիշատակի անտառը տնկվեց այս նոյեմբերին Լեռնաջուր IV-ում՝ սիրելի ամուսին Շահեի, ընտանիքի և ընկերների նվիրատվությունների շնորհիվ:

Եղիս Գիրոքեանը Իմ անտառ Հայաստանի առաջին աջակիցներից և դեսպաններից էր: Նա հավատում էր մեզ՝ նույնիսկ առաջին ծառի տնկումից առաջ: Նա աջակցում էր մեր առաքելությանը և տեսնում էր դրա իրական օգուտները մարդկանց համար, որովհետև հավատում էր, որ աշխարհին պետք են ավելի շատ անտառներ և ավելի լավ ապագա՝ սերունդների համար:

Եղիսը ծնվել էր Մեքսիկայում և 11 երեխաներից ավագն էր: Նրա մայրը՝ Մարի Ջեբօղլյանը, ծնվել էր Լիբանանում, իսկ հայրը՝ Մանուել Մեգերդիչ Սանգոչյանը, որը Հայոց ցեղասպանությունը վերապրածներից էր, 1915 թվականին 2 տարեկան հասակում մոր հետ փախել էր Թուրքիայի Ագին գյուղից:

Եղիսի հավատը մեր աշխատանքի հանդեպ օգնեց ձևավորել կազմակերպությունը դեռևս դրա ստեղծման առաջին օրերից: Այսօր նրա թողած ժառանգությունը շարունակում է աճել այն հողում, որին նա անմնացորդ հավատում էր: Նրա հիշատակի անտառը վկայությունն է իր տեսլականի, առատաձեռնության և ավելի լավ աշխարհ ունենալու անսասան հույսի:

ՄԵՆՔԱՆՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՍԻՆ

Մասնակցելով այս նախաձեռնությանը՝ ծնողներն ու երեխաները միասին կիսում են կյանքի ճանապարհը: Այն ծնողները, ովքեր ամենամսյա նվիրատվություն են կատարում իրենց երեխաների անունից, հրավիրվում են երեխաների հետ՝ այցելելու Ջրաշենի մեր անտառապատման տարածք:

Յուրաքանչյուր այցելություն կծառայի որպես հուզիչ հիշեցում բնության և միմյանց հանդեպ նրանց նվիրվածության մասին: Ինչպես ծառերն են արմատ ձգում և զարգանում, այնպես էլ երեխաները կաճեն նրանց հետ միասին, իսկ նրանց համատեղ պարբերական լուսանկարները ցույց կտան այդ ճանապարհը. Ջրաշենում վերջերս տնկված ծառերն այժմ փոքր են՝ հազիվ գերազանցելով շրջակա խոտածածկը: Մի օր դրանք երեխաներից բարձր կլինեն:

Սա սերունդների միջև կապի եզակի օրինակ է՝ ամրապնդված շրջակա միջավայրը պաշտպանելու և բարելավելու ջանքերով: Այս ծառերը կապրեն դարեր շարունակ և կլինեն երեխաների մեջ ներդրված սիրո և խնամքի կենդանի վկայությունը՝ արտացոլելով նրանց փոխանցված արժեքները: Մի օր այս երեխաները կպատմեն իրենց սեփական պատմություններն այն անտառի մասին, որն աճել է իրենց հետ միասին:

ՆՈՐԱՊՍԱԿՆԵՐԻ ԱՆՏԱՌ

Շիրակամուտը բացառիկ համայնք է. հենց այստեղ է գտնվում մեր «Նորապսակների անտառը»: Առաջին 150 ծառերը մենք այստեղ տնկել ենք 2020 թվականի աշնանը:

Համաձայն հայկական ավանդույթի՝ նորապսակ զույգերն իրենց հյուրերին տարոսիկներ են նվիրում: Այսօր երիտասարդ զույգերի շրջանում ոգեշնչող միտում է դարձել տարոսիկների փոխարեն ծառեր նվիրելը՝ ընտրելով մնայուն և իմաստալից ազդեցություն թողնելու տարբերակը:

Պատկերացրեք մի ապագա, որտեղ Շիրակամուտի բնապատկերը ծառերի մի վառ գորգ է, որտեղ յուրաքանչյուր ծառ ներկայացնում է սիրո մի յուրօրինակ պատմություն: Այս ծառերը կմնան այս զույգերի երեխաների ու թոռների համար՝ որպես կենդանի հուշարձան այն սիրո, որի շնորհիվ նրանք աշխարհ են եկել: Ավելի քան 40 զույգ արդեն միացել է այս շարժմանը:

ԹՎԵՐԻ ՀԵՏԵՎՈՒՄ ԿԱՆԳՆԱԾ ՄԱՐԴԻԿ

Անտառվերականգնման մեր բոլոր ջանքերը բացառապես հիմնված են տեղում աշխատող մարդկանց անդուլ և նվիրված աշխատանքի վրա. Լոռու մարզի Պենժամին Գումուշճեան տնկարանի մեր թիմի, ինչպես նաև ծառատունկ իրականացնողների և բրիգադիրների, ովքեր աշխատում են բաց դաշտում:

Սրանք այն ձեռքերն են, որոնք խոշոր նախագծերի մաս–շտաբներում հաճախ աննկատ են մնում, սակայն հենց նրանք են իրական փոփոխություն բերողները: Յուրաքանչյուր ցանված սերմ, յուրաքանչյուր խնամված տնկի և յուրաքանչյուր տնկված ծառ կրում է նրանց հոգատարությունը, ուժը և լուռ նվիրվածությունն ապագային:

Ներդրումներ կատարելով մեր տնկարանի թիմում՝ մենք ոչ միայն ներդրում ենք անում Հայաստանի անտառների երկարաժամկետ կայունության մեջ, այլև ապահովում ենք կայուն աշխատատեղեր այնպիսի համայնքների համար, ինչպիսիք են Ծահումյանը, Վանաձորը, Մարգահովիտը և Անտառաշենը:

Գարնանային տնկման աշխատանքներին տեղական համայնքներից միացավ շուրջ 150 մարդ, իսկ աշնանը՝ 120: Նրանք գալիս էին Ջրաշենից, Լեռնապատից, Պրիվոլնոյեից, Մեծավանից, Ստեփանավանից, Գյուլագարակից, Պետրով–կայից, Կաթնառատից, Ազնվաձորից, Վանաձորից, Սպիտա–կից, Ձորամուտից և Ծաղկաբերից: Մեր ազդեցության աշխար–հագրությունն իրապես տպավորիչ էր՝ ընդգրկելով Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններից մինչև Սպիտակ և Փամբակ:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՄԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

567 ԿԱՄԱՎՈՐ

Տարեցտարի ավելանում է անտառվերականգնման մեր նախա–ձեռնություններին միացող ընկերությունների թիվը, ընդ որում՝ նրանցից շատերը դառնում են մեր մշտական գործընկերները: Ծառատունկը՝ որպես թիմբիլդինգի ձևաչափ, ապահովում է յուրօրինակ հավասարակշռություն աշխատակիցների մասին հոգածության և շրջակա միջավայրի վրա թողած իրական ազդեցության միջև:

2390 ՏՆԿՎԱԾ ԾԱՌ

2025 թվականին Հայաստանի տարբեր մարզերում մեր թիմին միացան 567 կամավորներ և միասին տնկեցին 2390 ծառ: Այս ձևաչափի շնորհիվ ընկերություններն ամրապնդում են թիմային ոգին համատեղ ու նպատակային աշխատանքի միջոցով՝ միաժամանակ ստեղծելով տասնամյակների կյանք ունեցող մնայուն արժեքներ՝ անտառներ:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

Մեր գործունեության ընդլայնմանը զուգընթաց՝ օրենսդրական և իրավական խոչընդոտների լուծումն ավելի հրատապ է դառնում: Ցավոք, երկրի օրենսդրությունը նախատեսված չի եղել այն հեռանկարով, որ հասարակական կազմակերպությունները կարողանան զբաղվել լայնածավալ անտառվերականգնմամբ, ինչն էլ հանգեցնում է որոշ ծրագրերի հապաղմանը: Բարեբախտաբար, թե՛ կառավարության և նախարարությունների ներկայացուցիչները, թե՛ տարբեր շահակից կողմերը գիտակցում են, որ փոփոխություններն անխուսափելի են: Այնուամենայնիվ, բարեփոխումների մշակման և ընդունման գործընթացը դանդաղ է ընթանում:

Հողի վրա ի հայտ են գալիս նոր մարտահրավերներ, և դրանցից ամենաանհանգստացնողն անտառային հրդեհների աճող վտանգն է: Վերջին տարիներին առավել երկարատև և չոր աշունները, որոնք պայմանավորված են կլիմայի փոփոխության համաշխարհային միտումներով, երկարաձգել են հրդեհավտանգ սեզոնը և մեծացրել խոցելիությունը մեր բոլոր աշխատանքային տարածքներում:

2025 թվականի աշունը հատկապես ծանր էր Հայաստանի համար. հրդեհները Հայաստանի հյուսիսում այրեցին առնվազն 12,000 հեկտար տարածք՝ խոտհարքներ, մարգագետիններ, անտառներ և նույնիսկ «Դիլիջան» ազգային պարկը: Ցավոք հրդեհը, որի ճակատը որոշ հատվածներում հասնում էր մինչև 4 կիլոմետր երկարության, հասավ նաև մեր որոշ տնկարկների: Լոռու մարզի փրկարարական ծառայությունը մեր թիմի աջակցությամբ կարողացավ կանգնեցնել կրակը Ջրաշեն II-ի անտառապատման գոտուց ներքև: Սակայն Լեռնաջուր I և II, ինչպես նաև Ուրասար տեղամասերը տուժեցին: Մեր թիմը՝ մեծաթիվ հրշեջների, փրկարար ծառայության, համայնքապետարանի աշխատակիցների և տեղի բնակիչների հետ միասին, օր ու գիշեր պայքարում էր կրակի դեմ: Այնուամենայնիվ, քանի որ հիմնականում այրվում էր չոր խոտը, և կրակն արագ էր տարածվում ու մարում, մենք հույս ունենք, որ մեր տնկիները լուրջ վնաս չեն կրել: Իրավիճակը վերջնականապես կկարողանանք գնահատել ձնհալից հետո, երբ ծառերը դուրս գան ձմեռային քնից:

Այս զարգացող ռիսկերին դիմակայելը պահանջում է մեր աշխատանքի շարունակական հարմարեցում: Հակահրդեհային կանխարգելիչ միջոցառումների ուժեղացումը և տնկարկների մշտական հասանելիության ապահովումը դառնում են մեր երկարաժամկետ խնամքի և պահպանության ռազմավարության անբաժանելի մասը: Թեև այս մարտահրավերները բարդացնում են մեր աշխատանքը, դրանք նաև արտացոլում են մեկ այլ՝ ոգեշնչող իրողություն. մեր տնկած անտառներն աճում են, և մեր պատասխանատվությունն ընդլայնվում է՝ ծառ տնկելուց անցնելով ստեղծվող էկոհամակարգերի պաշտպանությանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

2025 թվականին մեր ֆինանսական մուտքերն աճել են մինչև 331.8 միլիոն դրամ, ինչը 2025 թվականը դարձնում է մեր պատմության մեջ երկրորդ լավագույն տարին: Սա մեծապես պայմանավորված է երկու կարևոր գործոններով. մենք սկսեցինք Շվեյցարիայի զարգացման և (SDC) համագործակցության գործակալության հետ 4-ամյա դրամաշնորհային ծրագրի առաջին տարին և սկսեցինք եռամյա նախագիծ ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի բանկերի միության հետ:

Այս վերջին նախագծի շնորհիվ բիզնեսների նվիրատվություններն աճեցին մինչև 138,4 միլիոն դրամ, ինչը մեր պատմության մեջ ամենախոշոր ցուցանիշն է, մինչդեռ անհատների նվիրատվությունները մնացել են մոտավորապես նույնը, ինչ նախորդ տարի:

Մեր ծախսերը նույնպես աճել են՝ հասնելով 320 միլիոն դրամի, ինչն արտացոլում է տնկման և խնամքի ծավալների ավելացումը: Մեր գործունեությունը նաև կարևոր ներդրում է ունեցել պետական բյուջեում՝ ընդհանուր առմամբ 50 միլիոն դրամ հարկերի տեսքով:

ԵԾՈՒՔԻ ԲԱՇԽՈՒՄ



ՀԱՆԳԱՆԱԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐ



ՆՎԻՐԱՏՈՒՆԵՐ

Յուրաքանչյուր նվիրատվություն անչափ արժեքավոր է մեզ համար: Ստորև ներկայացված են այն ընկերությունները, անհատները և մարդկանց խմբերը, ովքեր նվիրատվություն են կատարել 2025 թվականի ընթացքում: Մենք արել ենք հնարավորը՝ տվյալների առավելագույն ճշգրտությունն ապահովելու համար: Հայցում ենք ձեր ներողամտությունը ցանկացած հնարավոր անհամապատասխանության կամ բացթողման համար և խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ, եթե այդպիսիք հայտնաբերեք: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում նաև բոլոր նրանց, ովքեր կատարել են նվիրատվություն՝ ցանկանալով մնալ անանուն:

$200,000+

Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալություն Հայաստանում

$30,000+

Անտրէ Գումուշճեան
Մանթաշյանց բիզնես ակումբ
Շահե Գիրոքեան
Արտ-Բիոֆարմա
Լիա Շյելդերուպի ընտանիք և ընկերներ
Հայկական բժշկական հիմնադրամ

$20,000+

Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն
ԱյԴի Բանկ
ԱԿԲԱ Բանկ
Հովան Սիմոնյան

$15,000+

Դար հիմնադրամ
Արդշինբանկ

$10,000+

Վիվա
Լիբեկո Հիմնադրամ
ՀՀ կենտրոնական բանկ
Ամերիաբանկ
ԱՄԻՕ Բանկ
ԱրարատԲանկ
ԱրմՍվիսԲանկ
Բիբլոս Բանկ Արմենիա
Էվոկաբանկ
Ինեկոբանկ
Կոնվերս Բանկ
ՀայԷկոնոմբանկ
Մելլաթ Բանկ
Յունիբանկ
ՎՏԲ-Հայաստան Բանկ
Ֆասթ Բանկ
Ալտերնատիվ Վորքսփեյս Սոլուշնս
Արթինյան
Բարսամյան Դայմոնդս

$5,000+

«Դեպի Հայք» հիմնադրամ
Փլեյրիքս
Դանիել Գարաբեդյան
Թրայենգլ Փարթներս
Էնվիդիա Արմենիա
ԹիմՎյուվեր Արմենիա

$2,000+

Պիեռ Գյուրջյան
Աքայյան հիմնադրամ
Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ
Անտվերպենի ֆրանսիական բարեկամություն
Էլեկտրոլյուքս
Վահիկ և Ալիս Պետրոսյան հիմնադրամ
ԴատաԱրտ
Ացինո Ֆարմա ԱԳ
Գարի Ասարեան
Գրեյսոն հիմնադրամ
Վեգա
Սարգիս Անդրեասյան
Միրիամ Շրայբեր
Գո Ֆորեսթ

$1,000+

Բեռնար Կուլի
Մուրան ՍՊԸ
Անտվերպենի Լայոնս ակումբ
Ռոբերտ Շյելդերուպ
Սոլարոն
Նորա Սերգանի
Սիլ ընդ Սաունդ Արքիթեքթս
Հայ Տուն

$500+

Աբրահամյան եղբայրներ
Թոդ Զանատտա
Աքսել Մարտենս
Նադին Քալամյան
Էրիկ Վերբեկ
ՏՐԱՆՍԱՄՈՍՈ
Գինգկո Գարդենս
Ստեփան և Հիլդա Քերքյաշարյան
Ջուդի Կորմյե
Արսլանյան
Դոմինիկ Բրիոն
Պողոս և Բերջուհի Կիրոկյան

$500-

Ուբերտո Ֆումագալի Ռոմարիո
Լալա Գարաբեդյան
Հովնանյան դպրոցի 8-րդ դասարան
Հասմիկ Տերտերյան
Մարգրիտ Ղազարյան-Մանուկյան
Պողոս Մարտինյան
Մանուշ և Ռաֆֆի Շանթ Պողոսյան
Նիզամյան և Նիզամյան
Իրա Ֆարամարզի
Կուլբաս ՀԿ
Մարգար Ասքեջյան
Էմմա Բաբայան
Սոնա Կարապետյան
Դր. Մարգարետ Վալխեր
Նարինե Բալասանյան
Ռիչարդ Միքայելյան
Լիզա Աբաջյան
Գայ Վան Դուլեր
Փուփուլ Սանգոչյան
Մարալ Սիմոնյան
Ռաֆֆի Անֆիսիո
Ժան-Լուի Գրուտերս
Մարինա Կիսելյովա
Հայկ Հարությունյան Արթուրի
Շանթ Սամգոչյան
Անժելիկա Սահակովա
Թալինե և Գևորգ Բաբիկյան
Գայանե Մինասյան
Սիլվի Միրեկ
Լուչիանա Սետոլա
Ելենա Աբումրադ
Սամուել Շադին
Մարինա Թարփինյան
Ռեյչել և Ջիմի Նիգրո
Վիկտորյա Պիսարենկո
Իզաբել Ժակյան
Ռուբեն Մատիկյան
Պատրիկ Նագելս
Օլիվիե Հոտլետ
Թիերի Վան Դոսելաերե
Կոնջորյան Գագիկ
Ռուբեն Ջանբազյան
Բուրչու Բեչերմեն
Ավետիս Պողոսյան
Տալիա և Հակոբ Բուլդուկյան
Նաիրի Խաչատուրեան
Աննա Մելքումյան
Գաբրիել և Օլիվիե Թոնուս-Կամալի
Կամերման-Վույլստեկե
Տիգրան Բալայան
Նազելի Կյուրեղյան-Բարոն
Անն Սոֆի Վերստրեպեն
Ավետիք Հարությունյանց
Քեթրին Մանուկյան
Վիգեն Բերբերյան
Պիեռ Շահնազարյան
Ալեքսանդր Ակշատել
Լուսինե Խաչատուրյան
Արմեն Մարտիրոսյան
Գառնիկ Մկրտչյան
Վահան Պետրոսյան
Նարեկ Շուխյան
Աննա Վելիթյան
Բեթի Խաչատուրյան
Հասմիկ Սարգսյան
Վիմ Վան Նունեն
Սոֆյա Մանուկյան
Ռոնալդ Թելլալյան
Արփինե Անդրեասյան
Տաթևիկ Ավետիսյան
Նարեկ Չիլինգարյան
Քարմեն Հանսկեհյան
Լուսինե Հարությունյան
Զարուհի Հարությունյան
Նարեկ Մուսինյան
Մերի Պողոսյան
Սիփան Սուրենյան
Տաթև Երզնկյան
Նանար Քալանթարյան
Անյուտա Առստամյան
Ալեքսանդրա Բելոբորոդովա
Լիլիթ Մարտիրոսյան
Սերգեյ Խառատյան
Լևոն Թովմասյան
Հոսեյն Զադհաղիդի

Seed Sowers

Մեր սրտում հատուկ տեղ ունեն մեր ամսական նվիրատուները, որոնք մասնակցում են «Ապագայի սերմեր» ծրագրին: Դրանք մարդիկ են, ովքեր որոշել են փոքր, բայց կայուն ներդրում կատարել մեր առաքելության մեջ: Շնորհակալություն ձեր նվիրվածության, վստահության և երբեք չհանձնվելու համար:

Անտրէ Գումուշճեան
Թոդ Զանատտա
Լուսինե Մեսրոպյան
Սուրեն Սերոբյան
Ռեբեկա Օհանես
Թաթուլ Աջամյան
Սերժ Արտունով
Տաթևիկ Թադևոսյան
Մարլին Դյուրինկս
Թոյլեր Ֆորեսթ Քոնթրաքթինգ
Քրիստոֆ Քրիստիան
Լյուկ Բիշկ
Էմանուել Կուենս
Նաիրա Վարդանյան
Մարիամ Սիրականյան
Միշել Լոյքս
Արամ Իսկանդերյան
Բեռնար Կարետ
Վլադիմիր Սարգսյան
Էլյա Գրիգորյան
Արտավազդ Միլիտոսյան
Անի Հարությունյան
Հռիփսիմե Հարությունյան
Մարիամ Ներսիսյան
Յանա Շահրամանյան
Գևորգ Պողոսյան
Ռոբերտ Լևոնյան
Արեգա Շահնազարյան
Լուսե Շահնազարյան
Ալեքսանդր Կաժյան
Մերի Հարությունյան
Իզաբելա Հարությունյան
Մուշեղ Սիրեկանյան
Շահեն Արաբաղյան

«ԻՄ ԱՆՏԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ» ԸՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԿ

Աբելյան փող. 6/4, 408 գրասենյակ
0038 Երևան, Հայաստան
Հեռախոս՝ +374 12 20 29 09
info@myforestarmenia.org

www.myforestarmenia.org